| ՓՈԽԸՄԲՌՆՄԱՆ ՀՈՒՇԱԳԻՐ | MEMORANDUM OF UNDERSTANDING |
|---|---|
| _______________ 2017 | _______________ 2017 |
| «ՔոնթուրԳլոբալ Հիդրո Կասկադ» փակ բաժնետիրական ընկերությունը **(այսուհետ՝** Ընկերություն**), հասցե՝ Երևան, Մելիք Ադամյան 2/2, ի դեմս տնօրեն** Արա Հովսեփյանի**, և** | **"**ContourGlobal Hydro Cascade" CJSC **(hereinafter** Company**), having its seat and registered office at Yerevan city, 2/2 Melik Adamyan St., represented by** Ara Hovsepyan **in his capacity of Director, and** |
| **ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարությունը** (այսուհետ՝ **Նախարարություն**), հասցե ք. Երևան, ՀՀ, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, ի դեմս նախարար **Աշոտ Մանուկյանի**, ով գործում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի նոյեմբերի ___-ի N ___ արձանագրային որոշման հիման վրա,<br>միասին՝ Կողմեր, | **Ministry of Energy Infrastructures and Natural Resources of the Republic of Armenia** (hereinafter **Ministry**), having its seat and registered office at Republic Square, Government House 3, Yerevan, Armenia represented by **Ashot Manukyan,** acting based on Protocol Decision No ___ of the Government of the Republic of Armenia as of __ November 2017,<br>together Parties, |
| ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼՈՎ, որ տարեկան մինչև 1.150 գՎտԺ էլեկտրաէներգիա արտադրելը կախված է համապատասխան տարում ջրամբարներում առկա ջրի մակարդակից, Կողմերը սույնով ցանկանում են համագործակցել բարեխղճորեն, որ ապահովվի, հաշվի առնելով կիրառելի օրենքներն ու կարգերը, "Հայաստանի Էլեկտրական ցանցեր" ՓԲԸ (այսուհետ՝ ՀԷՑ) կողմից տարեկան մինչև 1.150 գՎտԺ էլեկտրաէներգիայի գնումը Ընկերության և ՀԷՑ միջև 2015 թվականի հուլիսի 1-ին կնքված էլեկտրաէներգիայի առուվաճառքի թիվ 15-16 պայմանագրի (այսուհետ՝ ԷԱՊ) գործողության ամբողջ ընթացքում: | WHEREAS, acknowledging that production of up to 1.150 GWh per annum of electric energy depends on the water level of the reservoirs as determined in each applicable year, the Parties desire to cooperate in good faith to ensure, subject to applicable laws and regulations, the purchase by "Electric Networks of Armenia" CJSC (hereinafter "ENA") for the entire duration of the agreement N 15-16 executed by and between the Company and "ENA" on July 1st, 2015 on sale and purchase of electric energy (hereinafter the "PPA") of up to 1.150 GWh per annum of electric energy. |
| Կողմերը համաձայնվեցին կնքել սույն **Փոխըմբռնման Հուշագիրը** (այսուհետ՝ **Հուշագիր**) հետևյալի մասին. | NOW THEREFORE, the Parties hereto agree to enter into this **Memorandum of Understanding** (hereinafter **MoU**) as follows: |
| 1. **Համագործակցության հիմնական սկզբունքները** | 1. **Main principles of cooperation** |
| 1. Միմյանց հետ համագործակցությունը շարունակելու և ամրապնդելու նպատակով և, հիմք ընդունելով (i) «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքը, (ii) Ընկերության, Հայաստանի Հանրապետության, «Որոտան Հիդրոէլեկտրա-կայանների Համալիր» ՓԲԸ, «ՔոնթուրԳլոբալ Տերրա Հոլդինգս Էս-Ա-Էր-Էլ» և «Սի-Ջի Սոլյուշնս Գլոբալ Հոլդինգ Քամփնի» Էլ-Էլ-Սի միջև 2015 թվականի հունիսի 8-ին կնքված գույքի առուվաճառքի պայմանագիրը (այսուհետ՝ ԳԱՊ), (iii) ԷԱՊ-ը, (iv) 2015 թվականի հունիսի 17-ին Ընկերությանը տրամադրված էլեկտրաէներգիայի արտադրության թիվ 0576 լիցենզիան, և (v) Նախարարության 14.07.2017թ. թիվ 1/22.3928- 17 գրությունը, Կողմերը համաձայնվում են սահմանել Ընկերության և Նախարարության փոխադարձ իրավունքներն ու | 1. For the purpose of continuing and enhancing the good faith cooperation between the Parties and in accordance with (i) the law of the Republic of Armenia "On energy system", (ii) the asset purchase agreement (hereinafter the "APA") executed by and among the Republic of Armenia, the Company, "ContourGlobal Terra Holdings" SARL and "CG Solutions Global Holding Company" LLC on June 8th, 2015, (iii) "PPA", 2015, (iv) the energy production license N 0576 issued to the Company by PSRC on June 17th, 2015 and (v) the letter N1/22.3928-17, dated 14.07.2017, between the Ministry and the Company, the Parties agree to set forth the mutual rights and responsibilities of the Company and the Ministry in connection with the annual energy production quotas under the PPA: |

պարտավորությունները՝ կապված տարեկան էլեկտրաէներգիայի արտադրության չափաքանակների հետ, հետևյալ սկզբունքներին համապատասխան.

1.1 Նախարարությունը կգործադրի իր լավագույն ջանքերը, որ երաշխավորի ՀԷՑ-ի կողմից Ընկերության արտադրած տարեկան 1.150 գՎտժ էլեկտրաէներգիայի (Նվազագույն Գնման Պարտավորություն) գնումը ԷԱՊ-ի գործողության ամբողջ ընթացքում՝ պայմանով, որ Կողմերը ընդունում են, որ.

(i) Նվազագույն Գնման Պարտավորությունը Ընկերությունը հնարավորություն կունենա արտադրելու՝ ելնելով համապատասխան տարում ջրամբարներում առկա ջրի մակարդակից, և

(ii) վերջին 15 տարիների ընթացքում «Որոտան հիդրոէլեկտրակայանների համալիրի» արտադրած էլեկտրաէներգիայի միջին չափաքանակը կազմել է 1.068.96 գՎտժ:

1.2 Նախարարությունը կգործադրի իր լավագույն ջանքերը, որպեսզի «էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ -ն. (i) համաձայնվի Նվազագույն Գնման Պարտավորությանը էլեկտրաէներգիայի տարեկան չափաքանակների տարեկան կանխատեսման հաստատման ժամանակ, և (ii) ապահովի, որ փոփոխություն կատարվի ԷԱՊ-ում վերևում նկարագրված Նվազագույն Գնման Պարտավորությունը ամրագրելու նպատակով՝ հաշվի առնելով, սակայն, որ «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 37 հոդվածի համաձայն «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ն, որպես համակարգի կարգավորող, պարտավոր է կարգավորել համակարգը՝ ելնելով նվազագույն ծախսումներով ներքին շուկայի պահանջարկը բավարարելու սկզբունքից:

**2. Կողմերի պարտավորությունները**

2.1 Նախարարությունը և Ընկերությունը պարտավորվում են համագործակցել սույն Հուշագրի 1-ին կետով նշված սկզբունքներին համապատասխան:

2.2 Կողմերի կողմից սույն Հուշագրում սահմանված պարտավորությունների խախտման դեպքում Կողմերը կրում են պատասխանատվություն ԳԱՊ 3,05 (ե) կետի պահանջներին համապատասխան:

**3. Հուշագրի իրավական ուժը և ուժի մեջ մտնելը**

3.1 Սույն հուշագիրը ուժի մեջ է մտնում փոխադարձաբար ստորագրելու պահից և գործում է մինչև Կողմերի կողմից իրենց պարտավորությունների ամբողջական կատարումը:

3.2 Սույն Հուշագիրը հանդիսանում է իրավական պարտավորեցնող փաստաթուղթ, որում նշված պարտավորությունները ենթակա են պարտադիր կատարման Կողմերի կողմից:

3.3 Սույն Հուշագիրը, ինչպես նաև դրանից ծագող կամ դրա հետ կապված պարտականությունները

1.1 The Ministry hereby shall use its best efforts to guarantee the purchase by ENA for the entire duration of the PPA, of up to 1.150 GWh per annum of electric energy (the “Minimum Dispatch Commitment”) produced by the Company, provided that the Parties acknowledge that:

(i) such Minimum Dispatch Commitment is subject to the Company being able to produce such quota of electric energy taking into consideration the water level of the reservoirs as determined in each applicable year; and

(ii) in the last 15 years the average annual electricity production in the hydro power plants of “Vorotan Complex of HPPs” amounted to 1.068.96 GWh.

1.2 The Ministry hereby undertakes to use its best efforts to cause the Electric Power System Operator CJSC (the “Grid Operator”) (i) to agree to the Minimum Dispatch Commitment during each annual energy production forecast figures approval, and (ii) to procure that the PPA is amended as required to incorporate the Minimum Dispatch Commitment described above, provided however that pursuant to article 37 of the law of the Republic of Armenia “On Energy” the Grid Operator as a system regulator is obliged to carry out a system regulation based on the principle of satisfying the domestic market demand with minimal costs.

2.

**2.1**

**2.2**

**3. MoU term and binding nature**

3.1 This MoU takes effect upon bilateral signature of the Parties and remains in force till full performance of the obligations of the Parties.

3.2 This MoU constitutes a legally binding document and the obligations defined therein shall be subject to mandatory fulfilment by the Parties.

3.3 This MoU, including any obligations arising out of or in connection with this MoU shall be governed by and construed in accordance with the laws of England.

3.4 This MoU is made in Armenian and English languages, in 2 (two) originals of equal force. In case of

| | |
|---|---|
| ղեկավարվում և մեկնաբանվում է Անգլիայի իրավունքի համաձայն:<br>3.4 Սույն Հուշագիրը կնքվում է հայերեն և անգլերեն լեզուներով, 2 (երկու) օրինակից հավասարազոր օրինակներով: Տարբերակների միջև անհապատասխանության դեպքում նախապատվությունը տրվում է հայերեն լեզվով կազմված օրինակին: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է սույն Հուշագրի մեկ օրինակ:<br><br>**“Քոնթուր Գլոբալ Հիդրո Կասկադ” ՓԲԸ**<br>ք. Երևան, Մելիք Ադամյան 2/2<br>Ամերիաբանկ ՓԲԸ, Երևան, Հայաստան<br>բ/հ 15700-17462030100<br><br>**Տնօրեն՝ ________________ Արա Հովսեփյան**<br><br><br>**ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն**<br>**ք. Երևան, ՀՀ Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3**<br><br>Նախարար ______________ Աշոտ Մանուկյան | inconsistencies between the English and Armenian versions, the Armenian version shall prevail. Each Party to the MoU is given one original.<br><br><br>**“ContourGlobal Hydro Cascade” CJSC**<br>2/2 Melik Adamyan street.Yerevan<br>Ameriabank CJSC, Yerevan, Armenia<br>b/a: 15700-17462030100<br><br>**Director ________________ Ara Hovsepyan**<br><br><br>**Ministry of Energy Infrastructures and Natural Resources of the Republic of Armenia**<br>Republic Square, Government House 3<br>Yerevan, Armenia<br><br>**Minister ________________ Ashot Manukyan** |